ԶՄՅՈՒՌՆԻԱՆ 1821–1829 ԹԹ. ՀՈՒՆԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԲՐՈՒՏՅԱՆ Մ. Ա.

Զմյուռնիան, գտնվելով Արևելքի և Արևմուտքի առևտրական ճանապարհների խաչմերուկում՝ բոլոր ժամանակներում եղել է զարգացած կարևորագույն քաղաքներից մեկը:

Դարեր շարունակ թուրքական տիրապետության տակ գտնվող այս քաղաքը XVII-XIX դդ. շարունակում էր մնալ առևտրի, արհեստների կենտրոն, որտեղ առաջատար դերում էին բնակչության գրեթե կեսը կազմող հույները և հայերը, որ թվաքանակով նրանցից մի փոքր քիչ էին: Այդ մասին բազմաթիվ ուսումնասիրություններ և վկայություններ կան. հատկանշական են օսմանյան կայսրությունում Անգլիայի դեսպան (1667-1678 թթ.) Պ. Ռայկոտի հաղորդած տեղեկությունները, ըստ որոնց՝ Զմյուռնիան կայսրության տնտեսական կյանքի կարևոր կետերից էր, որտեղ եռանդուն գործունեություն էին ծավալում հույն դրամատերերը[1]: Եվրոպական և ասիական մայրցամաքներում առևտրական ամենատարբեր կապերի մեջ մտած Զմյուռնիան փոքրասիական տարածաշրջանի ամենահարուստ կենտրոններից էր, որի երիտասարդությունը կրթություն էր ստանում Եվրոպայում[2]: Բրիտանացի ճանապարհորդների վկայությամբ՝ արդեն XIX դ. սկզբին Զմյուռնիան նման էր իրենց ծանոթ եվրոպական քաղաքներից շատերին, թեև տեղացի հայերն ու հույները, անկախ տնտեսական կյանքում ունեցած կարևորությունից, շարունակում էին տարբերվել իրենց՝ «ռայաներին» բնորոշ վիճակով՝ համարվելով սուլթանի ոչ մահմեդական ստրուկները[3]: Այս հանգամանքը, սակայն, չէր խանգարում, որ և՛ բուն Հունաստանում, և՛ հունաբնակ շրջաններում էական փոփոխություններ տեղի ունենան: Լեվանտի առևտուրը հնարավորություն էր ստեղծում տեղի քրիստոնյա բնակչության համար առավել սերտ շփումներ ունենալ Եվրոպայի հետ:

Հույն ժողովրդի 1821-1829 թթ. ազատագրական պայքարի առաջամարտիկը գաղութների բնակչությունն էր, որի սխրանքին նվիրված բազմաթիվ հետազոտություններ կան[4], սակայն այդ պայքարին

---

[1] **Rycaut P.** *The History of the Present State of the Ottoman Empire, London, 1686, p. 178.*

[2] **Петросян Ю., Юсупов А.** *Измир, М., 1973, с. 21. Հեղինակները, ներկայացնելով Զմյուռնիայի դերը կայսրության տնտեսական կյանքում, գերագնահատում են օսմանյան պետության նշանակությունը՝ պատշաճորեն չգնահատելով տնտեսության խթանիչ տարրի՝ ոչ մահմեդական բնակչության կարևորությունը:*

[3] **Schiffer R.** *Oriental panorama: British travelers in 19th Century Turkey, Amsterdam, 1999, p. 111.*

[4] **Gordon Th.** *History of the Greek Revolution, part 1, 2 London, 1832, 1844.* **Φιλήμων Ι.** *Δοκίμιον ιστορικόν περί τής ελληνικής Επαναστάσεως, Αθήνα, 1859, τ. 1, 1863, τ. 3,* **Douglas D.** *The Greek Struggle for Independence, 1821-1833, California, 1973,* **Шпаро О.** *Освобождение Греции и Россия, 1821-1829, М., 1965* ¨ ³ЫЙЭ:

Զմյուռնիայի հույն բնակչության մասնակցության վերաբերյալ ուսումնասիրությունները բավարար չեն, մինչդեռ Զմյուռնիան, իրադարձությունների կարևոր հանգույցում է եղել: Այն իր վրա է կրել և՛ անկախության հաղթանակների հետևանքները, և՛ կայսրության հաշվեհարդարի ծանր հարվածները: Հույների անկախության համար մղվող պայքարը Զմյուռնիայի և Կ. Պոլսի հայ և հույն համայնքների պատմության մեջ իր հետքն է թողել՝ որպես աղետալի փուլ[5]:

XIX դ. սկզբին հույն հասարակության հոգևոր կյանքում մեծ փոփոխություններ են տեղի ունեցել: Կրթության, գիտության զարգացման շնորհիվ XVIII դ. վերջից մինչև XIX դ. սկիզբը հայտնի է որպես հունական մշակույթի Լուսավորության դարաշրջան: Ժամանակի պահանջ էին դարձել գրատպության զարգացումը, ժամանակակից հունարենի լավ իմացությունը: Ականավոր գիտնականները, մտավորականները, ուսուցիչները հիմնականում գործում էին Հունաստանից դուրս՝ Ռուսաստանում, Ավստրիայում, Ֆրանսիայում, նաև օսմանյան կայսրության մայրաքաղաքում ու Զմյուռնիայում:

Ֆրանսիացի հրապարակախոս, պատմաբան Մ. Ուբիչինին, որը XIX դ. երկրորդ կեսին ճանապարհորդել է Հունաստանում, օսմանյան կայսրությունում, խոսելով Զմյուռնիայի մասին՝ նշում է, որ այդտեղի, Յանինայի, Լարիսայի հույն երիտասարդները ուսումնասիրում էին Հին Հունաստանի պատմությունը[6]: Եվրոպայում փայլուն կրթություն ստացած հույն երիտասարդներին մեծ աջակցություն էին ցույց տալիս հույն հոգևոր վերնախավը՝ Պոլսի, Երուսաղեմի հույն պատրիարքները, Զմյուռնիայի հոգևոր առաջնորդը: Պայքարի գաղափարախոսության ձևավորմանը նպաստում էր տպագրության զարգացումը Զմյուռնիայում[7]:

Դեպքերի ականատես, բրիտանական բանակի սպա Թոմաս Գորդոնը զարմանքով է խոսում ապստամբության նախօրյակին օսմանյան կայսրության խոշոր քաղաքների, հատկապես Պոլսի և Զմյուռնիայի հույն երիտասարդության գործունեության մասին, որը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում արտերկրում կրթություն ստանալու նկատմամբ, կոչ էր անում դուրս գալ դարավոր հպատա-

---

[5] **Schiffer R.,** *նշվ. աշխ., էջ 117:*

[6] **Ubicini M.** *Letters on Turkey, p. II, London, 1856, p. 60. Այս հեղինակը առհասարակ աչքի է ընկնում իր թուրքամետությամբ: Օրինակ, խոսելով Կոստանդնուպոլսի անկման մասին, նա նշում է, որ նվաճված ժողովուրդները պիտի հաշտվեն իրենց ճակատագրի հետ, հարմարվեն նոր պայմաններին: Նրա գրքում հակահունական տրամադրվածություն է նկատվում, ինչին իր քննադատական հոդվածով անդրադարձել է Զ. Ուդալցովան [*Удальцова З. В. *Предательская политика феодальной знати Византии в период турецкого завоевания (Византийский временник, т. VII, М., 1953, с. 102,103)]. Եվ հենց թուրքամետությամբ հայտնի Ուբիչինին չի կարողանում անտեսել այն հույների մարտական ոգին, որոնց երբեմն, որպես նվաճված ժողովրդի, «հարմարվելու» կոչ էր անում:*

[7] **Ubicini M.,** *նշվ. աշխ., էջ 61:*

կությունից. «Նրանք, ովքեր տեսել են Հունաստանը մեկ տարի առաջ, հազիվ թե այն ճանաչեն այսօր»[8]:

Հույն ժողովրդի ազատագրական պայքարի գաղափարական սկիզբը դրվեց Ռիգաս Վելեստինլիսի կողմից, որի հետ հանդես եկան գաղափարական պայքարի այլ մարտիկներ: Դրանցից ականավորը Զմյուռնիայում ծնված Ադամանտիոս Կորաիսն էր, որին անվանում էին «Նոր Հունաստանի Սոկրատես»[9]: Նա գտնում էր, որ թուրքերին առաջին հերթին կարելի է հաղթել միայն գիտելիքով, և կողմ էր Հունաստանում հեղափոխություն բարձրացնելուն: Մեծ էր Կորաիսի ներդրումը հունական մշակութային վերածննդի մեջ:

Ռիգասի հեղափոխական գաղափարախոսության տարածման շընորհիվ 1914 թ. Օդեսայում ձևավորված «Ֆիլիկի էտերիա» («Բարեկամական ընկերություն») գաղտնի կազմակերպությունը բազում հետևորդներ ունեցավ Հունաստանում և հունաբնակ գաղութներում: Մասնաճյուղեր ունենալով տարբեր քաղաքներում՝ «Ֆիլիկի էտերիան» իր կառույցի մեջ ընդգրկում էր տվյալ քաղաքի հույն հարուստ առևտրականներին ու դրամատերերին: Այդ ամենից անմասն չմնաց նաև Զմյուռնիան, որտեղ ևս հիմնվեց այդպիսի մի կառույց: 1819 թ. մի փաստաթուղթ վկայում է, որ ընդհանուր դրամական միջոցներից գումարներ էին հատկացվում տարբեր բնակավայրերին, այդ թվում՝ նաև Զմյուռնիային: Հաճախ մեծ ներդրումներ կատարողները դառնում էին տվյալ կառույցի անդամներ, օրինակ, Միխայել Նավտիսը, որը մասնագիտությամբ բժիշկ էր, իր հայրենի Զմյուռնիայի համար կատարած ֆինանսական ներդրման շնորհիվ նշանակվում է տեղի հետերականների անդամ[10]: Հետերականներ դարձան նաև որոշ հույներ, որոնք ծառայում էին Լեվանտի ռուսական հյուպատոսությունում: Նրանցից էին Ռուսաստանի հյուպատոսը Զմյուռնիայում, Քիոսի հյուպատոս Միլոնասը և այլք[11]:

---

[8] **Gordon Th.** *History of the Greek Revolution, part 1, p. 37: Հեղինակը մասնակցել է հունական ազատագրական պայքարին, եղել է Ջ. Բայրոնի մտերիմը, փորձել է Լոնդոնում բարձրացնել հունական ապստամբության արդարացիության հարցը:*

[9] **Арш Г. Л.** *Тайное общество "Филики этерия." Из истории борьбы Греции за свержение османского ига, М., 1965, с. 124. Կորաիսը ծնվել է Զմյուռնիայում 1748 թ., հարուստ առևտրականի ընտանիքում, հոր առևտրական գործերով է զբաղվել Հոլանդիայում, որտեղ լեզվաբանական համալսարաններում խորացրել է հունարենի իր իմացությունը, Եվրոպայում կրթվելուց հետո վերադառնալով հայրենիք՝ 6 տարի հայրենասիրական թեմաներով դասախոսություններ է կարդացել, թարգմանություններ կատարել Հերոդոտոսից ու Հոմերոսից՝ երիտասարդներին ոգևորելով անցյալի հերոսական դրվագներով (***Βακαλοπούλος Α.*** *Νέα Ελληνική Ιστορία, Θεσσαλονίκη, 2003, σ., 141).*

[10] **Φιλήμων Ι.** *Δοκίμιον ιστορικόν περί τής ελληνικής Επαναστάσεως, τ. 1, σελ. 372, 373. Այս հեղինակը հրատարակել է «Ֆիլիկի էտերիայի» անդամների ցուցակները, որոնցից 12-ը Զմյուռնիայից են՝ նավաստիներ, առևտրականներ, բժիշկներ: 1820 թ. սեպտեմբերի 28-ին (այսինքն՝ ապստամբության նախօրեին) կազմված մի ցուցակում տեղ էր գտել նաև Դեստունիսի անունը, որի՝ հետերիստներին հարելու վերաբերյալ կան հակասական տվյալներ (նույն տեղում, էջ 385):*

[11] **Арш Г.,** *նշվ. աշխ., էջ 67:*

«Ֆիլիկի էտերիան» նախատեսում էր ապստամբությունը սկսել երեք կարևոր վայրերում՝ Պելոպոնեսում, Կ. Պոլսում, Մոլդովայում ու Վալախիայում: Երբ այս կազմակերպության գլխավոր գրասենյակը տեղափոխվեց Պոլիս, ավելի բարձրացավ սրա հետ սերտ կապեր ունեցող Զմյուռնիայի դերը[12]: Որպես կայսրության խոշոր քաղաք՝ Զմյուռնիան, գտնվելով վարչական համակարգի խիստ ուշադրության կենտրոնում, կարծես թե պիտի հեռու լիներ բուն ապստամբությունից, այնինչ այստեղ են կատարվել ամենաիրարամերժ իրադարձությունները[13]: Ապստամբության նախապատրաստության ողջ ընթացքում քաղաքը շարունակել է մնալ որպես կարևոր օղակ: 1819 թ. մայիսի 15-ին կազմակերպության ղեկավար Ալ. Իպսիլանտիի նամակներից մեկում՝ հղված ապստամբության մասնակիցներից Արիստեիդիս Պապասին, հանձնարարվում է անհրաժեշտության դեպքում մտնել Պատրա, Կորնթոս, Զմյուռնիա[14]:

1821 թ. հունվարին Պելոպոնեսում եռանդուն գործողություններ սկսեց «Ֆիլիկի էտերիայի» հայտնի անդամներից Պապաֆլեսասը՝ Գրիգորիոս Դիկեոսը, որը երկու ամսվա ընթացքում ոտքի հանեց ողջ Պելոպոնեսը՝ այն դարձնելով ապստամբության կարևորագույն կենտրոններից մեկը: Հետագայում այստեղ լսվեցին հեղափոխության առաջին պայթյունները: Պապաֆլեսասի կողքին ակտիվորեն գործում էին նաև այլ հետերականներ՝ Կոլոկոտրոնիսը, Անագնոստարասը, Մավրոմիխալիսը: Վերջիններս ռազմամթերքը հիմնականում ստանում էին Զմյուռնիայից. հետերականներն այստեղից Պելոպոնես էին ուղարկում վառոդ և փամփուշտ: Զմյուռնիայի հետերականներն էին նավերով ռազմամթերք տեղափոխել, զինել 2000 մեսենացիներին և մանիացիներին, որոնք էլ մարտի 23-ին (ապրիլի 4-ին) գրավել էին Մեսենայի մայրաքաղաք Կալամեն[15]:

Զմյուռնիան ապստամբության հենց սկզբից էլ եղել է հեղափոխության կենտրոն, հավաստում է Թ. Գորդոնը. «Ազդանշանը տրված էր միանգամից նաև Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Սալոնիկում և օսմանյան կայսրության յուրաքանչյուր մեծ քաղաքում, որտեղ հույները ստեղծել էին պերճ և բարեկեցիկ տներ»[16]: Ապստամբության առաջին իսկ օրերից՝ գրեթե կիսով չափ հունաբնակ այս քաղաքը դարձավ ոչ միայն ազատագրական պայքարի կարևոր կենտրոն, այլև օսմանյան կայսրության բռնությունների թիրախ:

Տեղի քրիստոնյաների նկատմամբ կիրառված բռնությունները կարող են առաջին հայացքից դիտվել որպես պատիժ ապստամբության մասնակիցների նկատմամբ, սակայն հույն պատմաբաններն

---

[12] **Արա Գ.,** *նշվ. աշխ., էջ 27:*

[13] *Ավելին, Զմյուռնիայի ռուսական հյուպատոս Դեստունիսը ապստամբությունը կապում է հենց Զմյուռնիայում տեղի ունեցած իրադարձությունների հետ. (տե՛ս* **Prousis Th.** *Smyrna in 1821: A Russian View, Florida, 1992, p. 145):*

[14] **Φιλήμων Ι.** *Δοκίμιον ιστορικόν περί της ελληνικής Επαναστάσεως, τ. 1, σελ. 385.*

[15] **Βουρνάς Τ.** *Ιςτορία της Νεώτερης Ελλάδας, Πατάκη, 2000, σ. 79.* **Douglas D.,** *նշվ. աշխ., էջ 57:*

[16] **Gordon Th.,** *նշվ. աշխ., էջ 36:*

այն կարծիքին են, որ դրանք ոչ թե վրեժխնդրության հետևանք էին, այլ ունեին ավելի խոր՝ տնտեսական, քաղաքական արմատներ: Ի. Ֆիլիմոնոսը, օրինակ, նշում է. «Այս ծովափնյա հնագույն քաղաքը, որի բնակիչներին թուրքերը «գյավուր» էին անվանում, յուրացրել էր եվրոպական ու արևելյան սովորույթները, հավատարիմ էր հունականությանը, նրա բարգավաճումն ու առաջխաղացումը, որ իրականացվում էին հույների, հայերի, հրեաների կողմից, հաճո չէին թուրք վերնախավին: Եվ օգտագործելով Իպսիլանտիի կոչը՝ ուղղված Զմյուռնիայի բնակչությանը՝ միանալ ապստամբությանը, ենիչերիները հակասական տրամադրություններ ստեղծեցին ժողովրդի մեջ, հաշվեհարդար տեսան նրա հետ և, արյունահեղություն կազմակերպելով, հասան իրենց գերնպատակին՝ տիրելով հունական կապիտալին»[17]: Զմյուռնիայի այս շրջանի պատմությունը լուսաբանող կարևոր աղբյուրներից է Սպիրիդոն Դեստունիսի օրագիրը, որտեղ դեպքերը նկարագրվում են սկսած 1821 թ. մարտի 29-ից, երբ Ալեքսանդր Իպսիլանտիի՝ ապստամբության դրոշ բարձրացնելու լուրը հասավ Զմյուռնիա, մինչև օգոստոսի 7-ը: «Զմյուռնիան վտանգավոր քաղաք էր հունական ապստամբության շրջանում, որտեղ տեղի էին ունենում ամենաիսկական անկարգությունները»-, նշում է Զմյուռնիայում ռուսական հյուպատոսը[18]: Ըստ հեղինակի, Զմյուռնիայի քրիստոնյա բնակչության ապստամբությունն ավելի խոր արմատներ ունի: Զմյուռնիայում, ինչպես կայսրության մյուս քաղաքներում առկա էթնիկական, դավանական և ազգային ատելությունը, որ դարերի պատմություն ուներ, այժմ ուղեկցվում էր ենիչերիների և թուրքական տեղական կառավարման մարմինների բռնություններով՝ հաճախ քողարկվելով կառավարող համակարգի կողմից: Կայսրության քաղաքական անկումը XIX դ. սկզբին առաջ բերեց նաև տնտեսական ճգնաժամ, որից անմասն չմնաց նաև Լեվանտի առևտրում ուրույն տեղ ունեցող Զմյուռնիան՝ իր քրիստոնյա առևտրականներով հանդերձ: Տեղի հույների տնտեսական պայմանները սկսեցին վատթարանալ, խախտվեցին առևտրի օրենքները:

Իրադարձություններին քաջատեղյակ հեղինակը նշում է, որ ապստամբությունը թափ առավ հատկապես այն բանից հետո, երբ ենիչերիների բռնությունները օսմանյան կայսրությունում, նաև Զմյուռնիայում, դարձան սովորական և զանգվածային բնույթ կրեցին: Օսմանյան պաշտոնյաները անգամ սեփական վարչակարգի նկատմամբ ունեցած ատելության վրեժն էին ձգտում առնել քրիստոնյաներից: «Ապստամբական իրավիճակը, գայրույթ առաջացնելուց զատ, թուրքերի համար նաև մթնոլորտ էր ստեղծում՝ տիրել հունական կապիտալին»-, կրկին նույն եզրակացությունն է անում ականատեսը[19]:

---

[17] Φιλήμων Ι. *Δοκίμιον ιστορικόν περί της ελληνικής Επαναστάσεως, τ. 3, σελ. 239.*

[18] **Prousis Th.,** *նշվ. աշխ., էջ 145:*

[19] **Prousis Th.,** *նշվ. աշխ., էջ 147: Հայտնի է, որ Զմյուռնիայում թուրք վերնախավը կրոնական ատելություն էր բորբոքում, քրիստոնյաներին անվանում պետության և*

Դեստունիսի օրագրում առկա կարևոր վկայություններից են նաև մեկ այլ ականատեսի՝ Զմյուռնիայում Անգլիայի դեսպան Ֆրենսիս Ուերրիի հուշերը: Ծառայության մեջ գտնվելով 1794 թվականից՝ դեսպանը քաջատեղյակ էր ապստամբության նախօրեին Զմյուռնիայում տեղի ունեցող իրադարձություններին: Ըստ նրա, Զմյուռնիայում անթաքույց ատելություն կար հայերի և հույների նկատմամբ. դա նկատելի էր ամեն մի պահի: Դեսպանը պատմում է ենիչերիների կամայականությունների, բռնությունների և անպատժելիության մասին[20]:

Նույնը փաստում են նաև բրիտանացի ճանապարհորդները, որոնք գրում են, թե Կ. Պոլսում և Զմյուռնիայում «ամբոխի իշխանություն էր»: Հունաբնակ քաղաքներում, նաև Զմյուռնիայում, կոտորածներ էին տեղի ունենում, սակայն ակնհայտ էր, որ այստեղ թշնամանքին ավելանում էր նաև այն հանգամանքը, որ հույները Լեվանտի ընկերության կարևոր անդամներ էին, ուստի վտարելով նրանց՝ տեղի թուրքերը տնտեսական առավելության կհասնեին[21]:

Դեստունիսը իր հուշերում ցույց է տալիս հակակրանքն ու ատելությունը թուրքերի նկատմամբ, վերջիններիս բնորոշում որպես բարբարոսներ: Նա, ինչպես և Ուերրին օսմանյան կայսրությունը հաճախ ներկայացնում են որպես բռնապետություն, որտեղ բացակայում է կրթությունը, սակայն առկա է կրոնական և ազգային խտրականությունը[22]:

Օսմանյան պետությունը հույների ապստամբությունը պատժելու համար զանգվածային կոտորածներ և արյունահեղություններ կազմակերպեց նաև Կ. Պոլսի և Զմյուռնիայի քրիստոնյա բնակչության նկատմամբ: Բռնությունները մեծ ծավալ ստացան հատկապես այն ժամանակ, երբ Կ. Պոլսի հույն պատրիարքին ուղղված՝ ապստամբներին միանալու կոչը հայտնի դարձավ Բ. Դռանը: Պոլսահայ երևելիների նկատմամբ կատարված բռնությունների մասին է գրում Ավետիս Պերպերյանը: Դա վկայում է այն մասին, որ հայերը նույնպես առնչություններ ունեին հույների ապստամբության հետ[23]: Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահված հայերեն վավերագիրը փաստում է, որ այդ խառնակ շրջանում

հավատքի թշնամիներ, Իզմիրի գյավուրներ (տե՛ս Φιλήμων Ι. *Δοκίμιον ιστορικόν περί της ελληνικής Επαναστάσεως, τ. 3, σελ. 240*):

[20] 1803 թ. գրած հուշերում հեղինակը պատմում է, թե հյուպատոսական գրասենյակներից մեկն այրվել էր ենիչերիների միջև առաջացած վիճաբանության հետևանքով, իսկ նրանք իրենց վրեժը լուծում են քրիստոնյաներից՝ միայն այն պատճառով, որ հյուպատոսները դրամական հատուցում են պահանջել կրած վնասի համար: Հարձակվել են քրիստոնյաների թաղամասերի վրա, սպանել մոտ հարյուր անմեղ բնակչի, կողոպտել հունական խանութները: Ենիչերիների այս վայրագությունների հետևանքով 20.000 քրիստոնյա է զոհվել (**Werry E,** *Personal memoirs and letters of Francis Peter Werry, L., 1861, p. 34*): Այս հեղինակի նամակներից պարզվում է, որ նոյեմբերին ևս բռնությունները չեն դադարել (նույն տեղում, էջ 272):

[21] **Schiffer R.,** *նշվ. աշխ., էջ 119:*

[22] **Prousis Th.,** *նշվ. աշխ., էջ 162:*

[23] **Պերպերեան Ա.,** *Պատմութիւն Հայոց, Կոստանդնուպոլիս, 1871, էջ 103:*

Զմյուռնիան կարողացել է նաև գաղթականներ ընդունել հունաբնակ այլ շրջաններից. «...եւ մնացեալքն ցան եւ ցիր սփռեալք եւ կիսամեռ... հազիւ հասեալ ի Սէօքէ, եւ անդ բազում մարդասիրութիւնս տեսեալ ի սէօքեցւոց, եւ յուղարկեալ անտի ի Զմիւռնիա, եւ անտի ի Կոստանդնուպօլիս եկեալ ժամանեցին»[24]:

Զմյուռնիայում բռնությունների սկիզբը ընդունված է համարել 1821 թ. ապրիլը[25], թեև որոշ տեղեկությունների համաձայն, դրանք քաղաքում սկսվել են մարտի 25-ից, երբ հարբած ենիչերիները հարձակվել են դեսպաններից մեկի վրա: Մարտի 31-ին ավելի քան 10000 թուրք զինվորականներ հարձակվել են ֆրանկների թաղամասի վրա՝ պատճառաբանելով, թե իբր վերջիններս ապաստան են տվել «ռայաներին»: Այնուհետև մահվան սպառնալիքի տակ են հայտնվել արդեն բոլոր քրիստոնյաները, խանութները փակվել են, փողոցները լցվել են բռնության ենթարկված կանանցով ու երեխաներով: Նույն ժամանակ Մորեայում հույների կոտորած է կազմակերպվել[26]:

«Հունիսի 15-ին քաղաքում արտակարգ դրություն էր տիրում, խանութները փակ էին, շուկան՝ դատարկ, քրիստոնյաները չէին համարձակվում երևալ փողոցներում, հույների մեծ մասը փախել էր քաղաքից, հազարավոր հույներ ապաստան էին գտել կղզիներում, ընդհանուր առմամբ, 15 հազար մարդ հատկապես այն բանից հետո, երբ 3 հազար թուրք զինվորականներ մտել էին հույների տները, թալանել, սրի մատնել բնակչությանը»,- վկայում է Թ. Գորդոնը[27]:

Դեստունիսը 1821 թ. հունիսի 4-ին, ցավով նկարագրելով այս իրադարձությունները, նկատում է, որ որքան հույների նկատմամբ բռնությունները խստանում էին, վերջիններս այնքան ավելի քաջ էին դառնում[28]:

Առաջին հերթին բռնությունների զոհ դարձավ հույն վերնախավը: Ենիչերիները տիրացան նրա անբավ հարստությանը՝ միաժամանակ բնակչությանը զրկելով առաջատար ուժից. հույները հայտնվեցին համընդհանուր սարսափի մեջ: Սկզբնական շրջանում հույների մի մասը այստեղից կարողացավ փախչել ծովով, որոշ ժամանակ անց Բ.Դուռը որոշեց կանխել բնակչության հոսքը: Մայիսի վերջին 25 հազար հույներ սրի մատնվեցին, 45 հազարը, հիմնականում ունևոր դասից, ստրկության վաճառվեց Կ. Պոլսի և Եգիպտոսի շուկաներում թուրք ստրկավաճառների կողմից: «Երբեմնի ստվարաբնակ քաղա-

---

[24] **Հովակիմյան Ա.,** *Հայերեն նորահայտ վավերագիր 1821-1829 թթ. հույների ապստամբության մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1986, N 1-2, էջ 331):*

[25] *Հույն պատմաբան Ֆիլիմոնոսը հույների կոտորածների սկիզբ է համարում ապրիլի 6-ը (*Φιλήμων Ι. *Δοκίμιον ιστορικόν περί της ελληνικής Επαναστάσεως, τ. 3, σελ. 241): Թոմաս Գորդոնի վկայությամբ, մինչև ապրիլի 11-ը ենիչերիները որոշակի կարգուկանոն էին պահպանում, թեև երբեմն հատուկենտ սպանություններ էին կատարվում (***Gordon Th.,** *նշվ. աշխ., էջ 190):*

[26] **Prousis Th.,** *նշվ. աշխ., էջ 151: Այս ամենի մասին են պատմում նաև բրիտանացի ճանապարհորդները (***Schiffer R.,** *նշվ. աշխ., էջ 117):*

[27] **Gordon Th.,** *նշվ. աշխ., էջ 191:*

[28] **Prousis Th.,** *նշվ. աշխ., էջ 155:*

քը՝ իր շրջակա գյուղերով, հիասքանչ եկեղեցիներով մոխրակույտի վերածվեց. այսպես դրսևորվեց մահմեդականների վրեժը»,- վկայում է քաջատեղյակ հեղինակը[29]:

Արդեն հուլիսին Զմյուռնիան հայտնվեց անմխիթար վիճակում, իսկ բռնությունները նույն թափով իրագործվեցին մինչև նոյեմբեր:

Ապստամբության հետագա տարիներին էլ Զմյուռնիայում շարունակվեցին ռազմական գործողությունները, նաև՝ կոտորածները: Ենիչերիները երկու տարի անդադար այստեղ սպանդ էին կազմակերպում: Դրան ավելացան նաև սովն ու համաճարակը:

Օսմանյան տիրապետության շրջանում Պոլսում, Զմյուռնիայում, Բալկաններում, Պոնտոսում և այլուր հարևանությամբ ապրող հայերն ու հույները համատեղ պայքարի փորձեր են արել: Հունական ազատագրական շարժմանը Զմյուռնիայի հայերի մասնակցության վերաբերյալ գրեթե ոչինչ հայտնի չէ, մինչդեռ Զմյուռնիան, այդ շարժման ճանաչված կենտրոններից մեկը լինելով, չէր կարող պայքարի մեջ չընդգրկել տեղի հայությանը: Հայտնի է, որ քրիստոնյա այս երկու ժողովուրդները, թուրքական տիրապետության տակ գտնվելով, չեն բավարարվել միայն կրոնական, տնտեսական, հասարակական և առօրեական փոխհարաբերություններով: Նրանք հաճախ են միասնաբար ընդվզել ու դիմակայել օսմանյան բռնապետության դեմ: Հայ և հույն հեղինակների աշխատություններում ստված են Զմյուռնիայի հայության՝ այդ պայքարին մասնակցելու վերաբերյալ կցկտուր տեղեկությունները: 1825 թ. Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի շինարարությունը կառավարության հրամանով դադարեցվել է. «Ճիշտ հելլենական ապստամբության միջոցով տեղական կառավարութիւնը այն կարծիքը կունենայ, կամ կձեւացնե, թե հայերն ալ ապստամբութեան կը պատրաստուեն և անոր համար ամրոցանման շենք մը կը կառուցեն: Ուստի վարժարանի շինութիւնը կարգելուի, բոլոր ազգապետները կը բանտարկուեն»[30]:

Ասվածը հիմնավորվում է ականատեսներ Գորդոնի, Դեստունիսի, Ուերրիի վկայություններով, որոնք ապստամբների և բռնությունների ենթարկվածների մասին խոսելիս հաճախ են օգտագործում ոչ թե հույներ, այլ քրիստոնյաներ հասկացությունը: Զմյուռնիայում լույս տեսնող «Արփի Արարատեանը» թեև հպանցիկ է խոսում ապստամբության մասին, սակայն նկատելի է հեղինակի պարսավանքը թուրքական իշխանությունների նկատմամբ. «Քանի մը ներքին թեթև խռովութիւններ տեղի ունեցան Իզմիրի մեջ, 15 մարտ 1797 քեֆալոնացի յոյն մը ենիչէրիներէն մէկը սպաննելով, ենիչերիները կատաղած ամբողջ Ֆրանկաց թաղը կրակ տուին, ու 1821-ին մարտ ամսոյ մէջ յունական ապստամբության պատճառաւ շատ մարդիկ կորսնցուց»: Հավելենք այն, որ Ֆիլիմոնոսի ներկայացրած «Ֆիլիկի էտերիայի» անդամների ցուցակում տեղ են գտել Թեսա-

---

[29] **Werry E.,** *նշվ. աշխ., էջ 272,* **Gordon Th.**, *նշվ. աշխ., էջ 361:*

[30] **Հակոբյան Մ., Արա Գ. Լ.** *Этеристское движение в России, М., 1970 (Պատմա-բանասիրական հանդես, 1972, N 2, էջ 248):*

լիայից երկու հայ եղբայրների անունների՝ Էնեյան ազգանվամբ, երկուսն էլ՝ ուսուցիչներ, որոնք անդամագրվել են 1818 թ.[31]:

Հույների անկախության համար մղվող պատերազմը իր հետքն է թողել Զմյուռնիայի էթնիկական հարաբերությունների պատմության մեջ, անգամ զուգահեռներ են տարվում նրանց և հրեաների կոտորածների միջև[32]:

Երկարամյա պայքարի շնորհիվ ստեղծվեց Առաջին հելլենական հանրապետությունը, որը վերջնական ճանաչում ստացավ Լոնդոնի արձանագրությամբ՝ 1830-ին[33]: Հունական պետության մեջ Զմյուռնիան, սակայն, չմտավ:

СМИРНА В ГОДЫ ГРЕЧЕСКОГО ВОССТАНИЯ 1821-1829 гг.

БРУТЯН М. А.

Резюме

Существует множество исследований, посвященных национально-освободительной борьбе греческого народа в 1821-1829 гг. Однако в трудах очевидцев, историков имеются довольно скудные сведения относительно участия Смирны в этом восстании, между тем Смирна занимала ключевое место в этих событиях. К изменениям, произошедшим в духовной жизни греческого общества в конце XIX века, не осталась непричастной и Смирна, население которой откликнулось на революционные призывы Ригаса Велестинлиса, в дальнейшем вступив в тайную организацию ”Филики этерия”. Именно гетеристы Смирны перевезли на кораблях боеприпасы, вооружив 2000 месенян. Впоследствии город подвергся тяжелым притеснениям Османской империи. Если на первый взгляд применение насилия по отношению к христианскому населению рассматривалось как наказание участников восстания, то по свидетельству посла Англии в Смирне Франсиса Уерри и российского консула Ст. Ю. Дестуниса притеснения преследовали цель завладеть греческим капиталом.

---

[31] **Φιλήμων Ι.** Δοκίμιον ιστορικόν περί της ελληνικής Επαναστάσεως, τ. 3, σελ. 387.

[32] **Schiffer R.,** *նշվ. աշխ., էջ 117:*

[33] *Papers Relative to the Affaires of Greece: Protocols of conferences held in London, Harrison, 1830, p. 311.*

Сохранились незначительные сведения об участии армян Смирны в греческом национально-освободительном движении, между тем армянское население не могло не быть вовлеченным в это движение, поскольку наравне с греками оно восставало против османского владычества. Однако в состав нового независимого государства Смирна не вошла.

SMYRNA IN THE PERIOD OF GREEK INSURGENCE BETWEEN 1821 AND 1829

M. BRUTYAN

Abstract

There are many studies on the Greek national struggle for liberation. The works by historians comprise little information for people to learn whether Smyrna joined this insurgence or not, whereas Smyrna was just in the crossroads of developing events. Both the results of the struggle and the stab of retribution affected Smyrna. The changes that happened in Greece in the 19th century had an effect on Smyrna too - people who lived there followed the appeals for struggle by Righas Velestinlis, and later joined a secret organisation, called "filiki Eteria". During the revolt preparations, the city continued to remain the centre of events. The members of the aforementioned organization carried weapons by water and armed 2000 inhabitants of Mesena (an island in Greece). Later on, the Ottoman Empire took aggressive measures against the city.

On the one hand, this violence was used to punish the rebels, on the other hand, Francis Werie, the UK ambassador to Smyrna, and Destunis, the Russian ambassador to Smyrna, claimed the violence having been used to take advantage of the situation and to get control over the Greek capital. Very little information can be found on the Armenian participation in the struggle, whereas it was on multiple occasions that Armenians had united and struggled against the Ottoman rule. In 1830, Greece was declared a republic, but Smyrna was not included into it.